

Տևտեսական ճգնաժամերի առաջացման պատճառը արտադրության և սպառման միջեւ հակադրությունն է: Աշխատանքի բաժանումը, մասնագիտացումների և կոոպերացիաների զարգացումը ավելացրեց արտադրության ու սպառման միջեւ հակադրությունը: Ապրանքները նախկինում հիմնականում վաճառվում էին տեղի շուկաներում, և սպառումն ուներ տեղային բնույթ: Ապրանքների արտադրության և շուկայական հարաբերությունների զարգացումը խորացրեց արտադրության ու սպառման միջեւ առկա հակադրությունը: Ազատ մրցակցության պայմաններում տևտեսական ճգնաժամերը դարձան օբյեկտիվ օրինաչափություն: Կապիտալիզմի ժամանակ առաջին անգամ ստեղծվեց արտադրության ավելացում:

Առաջին ճգնաժամը տեղի ունեցավ 1825թ. Անգլիայում, որտեղ այդ ժամանակ կապիտալիզմը դարձավ իշխող ռեժիմ: Հաջորդ ճգնաժամը տեղի ունեցավ 1836թ., Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում: 1847թ. ճգնաժամն ընդգրկեց Եվրոպայի գրեթե բոլոր երկրները: Իսկ առաջին համաշխարհային տևտեսական ճգնաժամը տեղի է ունեցել 1857թ.: Այդպիսի ճգնաժամեր տեղի են ունեցել 1900-1903թթ., 1907թ., 1920թ., բայց համաշխարհային ամենածանր ճգնաժամը 1929-33թթ. էր, որը ծնեց անթիվ սնանկացումներ:

Այդ ճգնաժամից հետո լճացումը երկար տևեց: 1937թ. առաջ եկավ նոր ճգնաժամ՝ ոչ նախորդի նման ուժեղ, բայց բավական վնասաբեր: Արտադրության համախառն արդյունքը կապիտալիստական աշխարհում կրճատվեց 11%-ով, իսկ ԱՄՆ-ում՝ 21%-ով, ավտոմեքենաների արտադրությունը կրճատվեց 40%-ով: Այդ ճգնաժամի զարգացումն ու սրումը ընդհատվեց երկրորդ համաշխարհային պատերազմով՝ 1939-45թթ.:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1948-49թթ. առաջ եկան տեղային տևտեսական ճգնաժամեր, մասնավորապես՝ Կանադայում և ԱՄՆ-ում: Կապիտալիստական երկրներում հերթական տևտեսական ճգնաժամերը տեղի են ունեցել 1953 և 1954, 1957 և 1958 թվականներին: Հետպատերազմյան շրջանում ամենախոր ճգնաժամը եղել է 1973-75թթ., որն առնչվեց կապիտալիստական բոլոր երկրներին և բնութագրվեց ինֆլյացիայի կտրուկ աճով:

Ճգնաժամի դասակարգված չափանիշները կարող են գնահատվել որպես դրա բնութագրեր, որոնք «հուշում» կամ որոշում են իրավիճակի գնահատականը, դրա կառավարման որոշումների մշակումն ու ընտրությունը: Ճգնաժամի վտանգը մշտապես առկա է: Դրա համար կարելու է տեսնել ճգնաժամի առաջացման նախադրյալները և նախանշել դրանց վնասաբեր հետեւանքները:

Սոցիալ-տևտեսական համակարգը ինքնակարգավորող է, այսինքն՝ դրանում գործում են հավասարակշռությունը կարգավորող մեխանիզմներ: Իսկ կառավարման համակարգը գոյություն ունի, որպեսզի սոցիալ-տևտեսա-

կան համակարգն ապահովի հնարավորինս քիչ «հիվանդություններով» ու առավելապես հետեւողական զարգացմամբ:

Ճգնաժամերի հաղթահարումը կառավարվող գործընթաց է: Կառավարման հաջողությունը կախված է ճգնաժամերի առաջացման ախտանիշների ժամանակին հայտնաբերումից: Ճգնաժամի բնութագրերը բաժանվում են՝ ըստ տիպաբանական առարկայական ոլորտների, ծավալների սրություն, ինդիկսների համակարգ, պատճառներ, զարգացման ոլորտ, հնարավոր հետեւանքներ:

Ճգնաժամի հայտնաբերման գործում մեծ նշանակություն ունի հիմնախնդիրների փոխհարաբերության գնահատականը: Սոցիալ-տևտեսական համակարգում կառավարման ժամանակ են պետք է գործի հակաճգնաժամային զարգացման մոնիտորինգը: Ճգնաժամերի գոյության մասին ենթադրությունները հնարավոր են ճգնաժամի զարգացման գործընթացի և գործոնների վերլուծության ճանապարհով: Ճգնաժամերի հայտնաբերման համար անհրաժեշտ է օգտագործել սոցիալ-տևտեսական համակարգի իրավիճակի գնահատման բոլոր ցուցանիշները: Հետեւաբար՝ անհրաժեշտ է մշակել նոր, համադրական ցուցանիշներ՝ ճգնաժամային իրավիճակների առաջացումն առավել ճշգրիտ և ժամանակին կանխորոշելու համար:

Մեծ նշանակություն ունի ոչ միայն ցուցանիշների համակարգը, որն արտացոլում է ճգնաժամի հիմնական հատկանիշները, այլև դրանց գործնական կիրառման մեթոդաբանությունը: Ճգնաժամի կանխորոշման մեթոդաբանության հետ սերտ կապված է այդ աշխատանքի կազմակերպումը, որը ենթադրում է մասնագետների և նրանց խորհրդատվությունների ու որոշումների առկայություն: Ճգնաժամերի կանխատեսումը պետք է լինի պրոֆեսիոնալ մակարդակի: Սոցիալ-տևտեսական համակարգի գոյությունը պայմանավորված է մարդկանց գործունեությամբ: Չնայած ճգնաժամերի «մարդկային բնույթին»՝ առանց նրանց զարգացումն հնարավոր չէ: Մարդկային գործունե հաճախ ճգնաժամի նախադրյալ է աղբյուր է:

Այսպիսով՝ հակաճգնաժամային զարգացումը ոչ թե «անճգնաժամային» գործընթաց է, այլ ճգնաժամերի՝ որպես մարդկային շահերի հետեւանքների հաղթահարում: Ճգնաժամը մշտապես առկա է: Դրա համար կարելու է գտնել դրա առաջացման նախադրյալները և նախանշել ճգնաժամերի վնասաբեր հետեւանքները:

Ճգնաժամային իրավիճակներում առաջանում է ռիսկերի ահռելի քանակություն: Դրանք շատ տարատեսակ են՝ ըստ իրենց ոլորտների, հնարավոր կորուստների մեծության և առաջացման աղբյուրների: Դրա հետ կապված՝ առաջանում է ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման պահանջարկ՝ հմուտ «ռիսկային մենեջերների» ներգրավմամբ, ովքեր ռիսկային իրավիճակների կառավարման մասնագետ են:

ՌԻՍԿԵՐԻ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

**Լուսինե
ՄԿՐՏՉՅԱՆ**
Տևտեսագիտության
թեկնածու,
դոցենտ



Ռիսկերի կառավարման ամենահեռանկարային օրինակ կարող է ծառայել դրանց կանխատեսման եւ կազմակերպման գործընթացը: Ռիսկային է համարվում հիմնախնդիրների այնպիսի լուծումը, որն ընդունվում է անորոշության պայմաններում, բայց սպասվելիք արդյունքներին հասնելու հավանականության դեպքում:

Կառավարման նպատակաուղղված գործընթացը ենթադրում է դրա գործառնությունների տրամաբանական գործողությունների իրականացում: Ղեկավարվող ձիսկը հետազոտվում է կազմակերպության նպատակաուղղված գործընթացով, որն ունի կազմակերպական, տնտեսական, տեղեկատվական, ժամանակային եւ իրավական չափորոշիչներ:

Ուսումնասիրենք կառավարման գործառնությունները, որոնք բնութագրում են ձիսկերի կանխատեսման գործընթացը: Դրանցում գլխավոր դեր ունի տեղեկատվական վերլուծությունը, որը ներառում է արտաքին եւ ներքին միջավայրերի մոնիտորինգի աշխատանքներ՝ նոր ձիսկի ազդյունների կանխման եւ հայտնի գործոնների ուսումնասիրման համար:

Իրավիճակի ախտորոշումը կախված է խնդրի յուրահատկությունից, որի համար պետք է գտնել լուծման տարբերակներ: Տարվող աշխատանքների հիմնական մասը վերաբերում է ձիսկի շեղումներ առաջացնող պատճառների ուսումնասիրմանը: Որպես կառավարման գործընթացի փուլ՝ որոշումների տարբերակների մշակումը հիմնվում է այն բանի վրա, որ դրանցից յուրաքանչյուրի համար ուսումնասիրվում են ձիսկի հնարավոր բացասական սահմանների ի հայտ գալը: Որոշումների ընդունման փուլը պարունակում է թույլատրելի ձիսկի չափորոշիչներ եւ պատասխանատվության համակարգի մշակում: Վերջնական փուլը կազմակերպումն է ու իրականացումը: Դրա հիմնական խնդիրը ախտորոշման իրականացումն է: Ռիսկերի չափորոշիչների ժամանակավոր ստուգատեսը եւ ճշտումները ունեն էական դեր ու նշանակություն:

Գոյություն ունեն նաեւ ազդեցության հիմնական լծակներ, որոնք օգտագործվում են ձիսկերի կառավարման դեպքում: Կառավարման քաղաքականությունը գործողությունն է՝ ուղղված հիմնախնդիրների ուսումնասիրման ապահովմանը՝ կազմակերպության ձիսկային մենեջերի գործառնությունների եւ նպատակների ուղղությամբ: Ռիսկի աստիճանի ընտրության չափանիշները որոշում են իրավական դաշտի սահմանները՝ կախված արտադրանքի վաճառքի ծավալներից, ծախսերի մեծությունից, սղաճից, գների փոփոխությունից: Ռիսկային կորուստների նվազեցման համար պետք է գտնել ճանապարհներ եւ միջոցներ: Այս խմբի մեջ են մտնում տարատեսակ ապահովագրումները եւ ձիսկերից պաշտպանության այլ միջոցառումներ, որոնք պարտադիր են հակաճգնաժամային կառավարման պայմաններում: Եվ վերջում իրականացվում է կորուստների մակարդակի արդյունավետության գնահատում՝ ձիսկերի կանխատեսման ծախսերի համեմատ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ձիսկերի գնահատումը արդյունավետության գնահատման մի չափանիշ է:

Կազմակերպությունների ղեկավարման ժամանակ առաջանում են կառավարչական օղակներ: Դրանք վերաբերում են այնպիսի ստորաբաժանումներին, ինչպես ձիսկերի կանխորոշումն ու փորձաքննությունը, խորհրդատվական ծառայությունները: Ներկայում հիմնախնդրի ամենապարզ լուծումը կազմակերպությունում ձիսկային մենեջերի պաշտոնի ավելացումն է եւ ինչ-որ մարմնի ստեղծումը, որը կհամակարգի եւ կկառավարի ձիսկերը՝ ըստ տարատեսակների:

Չակաճգնաժամային մենեջմենթում անհավանական մեծ նշանակություն է ձեռք բերում ձիսկային իրավիճակների ղեկավարման մասնագիտացումը: Ռիսկի մակարդակը հաճախ մեծապես կախված է մենեջերի կողմից իրավիճակի ընկալմամբ, նրա գիտելիքից, ինտուիցիայից, փորձից եւ ոչ այնքան շուկայի զարգացումից ու ընդհանրապես տնտեսությունից:

Այսպիսով՝ ձիսկի հաջող կառավարման համար անհրաժեշտ են.

- ✓ կազմակերպություններում ստեղծել տեղեկատվու-

թյան ապահովման համակարգ, որը կհամապատասխանի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համաշխարհային ժամանակակից միտումներին,

- ✓ կառավարչական անձնակազմի կրթությունը,
- ✓ անձնակազմի մասնագիտական ունակությունները: